

լինցաւ, ահա՛ երեքշաբթի օրէն թանձր մը-
շուշ մը պատեց մեր երկինքը, կարծես ա-
ւելի շեշտեալու համար Ս. Մեսրոպի դորու-
թիւնը:

Հիմա որ այս հրաշալի եղելութիւնը պատ-
մեցի, ի՞նչ հետեւութիւն կրնանք հանել
անկէ.

Շատ պարզ հետեւութիւն մը:

Յորեկանական նոր հանդէսներ կազմա-
կերպելի թ պատիւ Ս. Մեսրոպի որոնք տեսնն
յառաջիկայ Յունիար մէկէն չմինչև Ապրիլի
սկիզբները:

Այս կերպով ամբողջ ձմեռը պատուական
ու գեղեցիկ օրեր կ'ունենանք, ցուրտէն
չենք Նեղուիք և աղքատներն ալ ամուսին
սիր չեն քաշեր:

ԵՐՈՒՆԴ ՕՏԵԱՆ

ՔԻՐՈՍԵՐՈՒ ԿԵԱՆՔԷՆ

Երիտասարդ Քիրոսերուն Հիլի (յոյս)
Միութեան հրատարակած «Հըթալը Քիրո-
սի» (քիւրսին արեւը) անունով հանդէսին
Ա. թիւին մէջ, տարթ Ապուլլաս ձեւտէթ
պէյ հետեւեալ խօսքերը ուղղած է յիշեալ
հանդէսին խմբագրութեան.—

Անկառկած, Քիրոսերուն և քիր-
տութեան ծառայելու համար քրտինք
կը թափէք, մեղան կը սպասէք կոր:
Բայց թերթը՝ դրող, կարդացող ազ-
գերուն համար կը հրատարակուի:
Քիրոսերուն մէջ գրող կարդացող են.
զժբաղդաբար վստահ եմ որ մատով
ցոյց կը արուի: Ապահովաբար, դուք
կ'ուզէք քիրտերը քաղաքակիրթ,
լուսաւորեալ, փոխուած ազգ մը տես-
նել, և ընաւ տարակոյս չկայ որ օս-
մանցի հայրենասէր մը այսինքն օսմ-
կայսրութեան մեծութեանն ու զօրու-
թեանը ցանկացող ցեղի մը անհատը,
իր պատկանած ցեղին լուսաւորուե-
լուն պէտք է բաղձայ:

Բայց բաղձանքէն ի՞նչ կ'ելլէ:
Բաղձանքին պէտք է հետեւի գործը:
Իր ցեղին համար սրտին մէջ ուժով
սէր մը և սիրալիր ուժ մը զգացող
երիտասարդը ազգասիրութեան ու
գործունէութեան պայման մը պէտք է
համարի Անատուլու վաղելու Հոս, Պոլ-
սոյ մէջ, բերան յոգնեցնելէն զրիչ
շարժելէն ընաւ օգուտ մը չելլեր:

Դիւղե՛րը, գիւղե՛րը: Կորեկէ հաց
ուտելը, այծի կաթ խմելը և գիւղա-
ցիները՝ լուսով ու քաղաքակիրթու-
թեան բարիքներովը կշտացնելը պէտք
է քաջաբար իրենց նպատակակէտ ը-
նեն մեր երիտասարդները:

Կը հարցնեմ ձեզի: Ես չեմ գիտեր,
սորվեցուցէք ինձի, աշխարհքի մէջ
ո՞րչափ քիրտ կայ, ո՞ր կի բնակին,
ինչ ո՞վ կը զբաղին, ինչ է տուրևառ-
նին, ընդհանուր առմամբ ի՞նչ է տրն-
տեսական կեանքերնին: Արական
սե՞ռը աւելի է թէ իգական սեռը, Հա-
րիւրին քանի՞ համեմատութեամբ
գրող կարդացող ունին: Արհեստ ըս-
ուելիք ի՞նչ կայ քիրտ ցեղին մէջ:
Հողատիրութեան կողմէ՛ օսմանցի
միւս ցեղերուն հետ բաղդատելով ի՞նչ
դիրք ունին: Յայտնի է թէ Քիրոսերը
Ամերիկա գաղթել սկսած են, մէկ
տարուան մէջ քանի՞ քիրտ կը գաղ-
թէ: Ամերիկայի մէջ իշնեց հայ հայ-
րենակիցներուն հետ բաղդատելով
ի՞նչ զիրք ունին: Ընտանի անասուն
պահելու մէջ, զբաղի ցեղերու հետ
ի՞նչ ձեռնարկ ունին: Քիրտ ցեղին
սովորութիւնները մինչև ո՞ր աստի-
ճան կը պահուին: Քիրտերը իրենց
ջանքերով ու նախաձեռնութեամբ
ո՞ր և ո՞րքան նախնական վարժա-
բաններ բացած են: Հողատէր քիրտ-
տերուն զէ՞մ ի՞նչ է հող չունեցողնե-
րուն համեմատութիւնը: Քիրտերը
չառնալու՞ վրայ են թէ կը քիչնան:
Ո՞րքան կը ծնին և որքան կը մեռնին:
Ի՞նչ է ամուսնութեանց և ամուսնա-
լուծութեան թիւը:

Այս հարցումներուն պատասխանը
ազգայնէր Քիրոսերէն կ'ուզեմ:

Ես կը հարծեմ կոր որ այս խըն-
դիրները սեղանի վրայ դնելով լուծ-
ուելիք խնդիրներ չեն: Եւ շատ կը
ցաւեմ որ մեր կառավարութիւնն ալ
այս կենսական հարցերով տակաւին
պէտք եղածին պէս չէ զբաղած թերևս
ալ ժամանակ չէ ունեցած:

Անատուլու թոյնով և մահով լեց-
ուած է:

Ս. ՄԵՍՐՈՊ ԵՒ ՄՇՈՒՇՆ

Ըսելիք չի կայ, գործերնիս զօրաւոք
սուրբի մը հետ է:

Կը յիշէք յորեկանական տաներէն առաջ
ըրած օղերը, ամպ, անձրև, ցուրտ, այնպէս
որ հանդէսներու կազմակերպիչները մտա-
տանջ իրարու կ'ըսէին.

— Ի՞նչ ապուր պիտի թառնենք հայկա-
կան այրուբէնին մէջ, եթէ տօնի օրերն ալ
այս օղերը ունենանք:

Եւ ահա՛ այն օրն ուր Աղբալին ժողովը
հանդիսաւորապէս հռչակեց կրկնակ Յորեկ-
եանական հանդէսներու բացումը, երկինքն
ալ բացուեցաւ և շողողուն արեւը իր զէմ-
քը ցուցուց:

Գահ մը, ժողովին միջոցին, երեսփոխան-
ները կարծեցին թէ տեղաաւարաբ կ'անձ-
րեւէ, բայց յետոյ հասկցուեցաւ որ ասու-
նապետ Տօքթ. Տաղաւարեան էֆէնտիի եր-
կարաշունչ նառն էր որ այդ տպաւորու-
թիւնը կ'ընէր, և թէ արեւը թէև քանի մը
ամպով յօրանջած՝ բայց տեղէն չէր շար-
ժան:

Անկէ ետքը, շարժի և կիրակի, միշտ
արշալոյսէն մինչև իրիկուն, ջինջ ու պայ-
ծաւ օրեր ունեցանք:

— Ս. Մեսրոպի արեւը, ինչպէս կը բա-
ցատէր մեր թէպօրի բարեկամը, որ իրև
հանդէսներուն կազմակերպիչներէն մին՝
նազատ գլուխը ատեն ատեն զէպ ի երկինք
կը վերցնէր, Յետուի պէս զայն իր տեղը կե-
ցնելու համար:

Իո՞վ հազիւ թէ Յորեկանական հանդէսը